ները 700 ոսկւոյ արժողութեամբ. կտակեալ տուներուն արդիւնքովը, ըստ կտակի, երկու աշակերտներ պիտի դաստիարակուին Ժառ. վարժ.ին մէջ: Տն. Ժողովը կ'որոշէ այս երկու տուները ծախել, ու անոնց փոխարէն, Երուսաղէմի մէջ կալուած գնել. (Արձգր. Տն. Ժող. Նիստ ճձը. 1891, էջ 60):

ՄԱՐԿՈՍ ԱԲ. ՊՈԼՍԵՑԻ. — Մբ. իր մասին կը կարդանք Մինաս Ամդեցիին Օրագրութեան մէջ. «եկաւ Մարայ Ղավուխով, և մեք (Մինաս պտրք. Ամդեցին) սեղանի վրայ դուրս արինք գինք. յետոյ Եսային և Կիւլէմիրն իրճա. ոտա տվաք իւրն. Մուրա խազնայն կերուսաղիմայ սուրրաւ երեր քաղճձ (=2480) ոսկի»: Մարկոս աբ. և Կիւրճին (Պետրոս վրդ.) կը դառնան (յԵգիպտոս) «հրամանաւ Նոր վէքիլ Յովհաննէս վրդ. Ամասիացւոյ.». որ է փոխանորդ Աւետիք պատրիարքի. սոյն օրագրութեան թուականն է 1701, դեկտ. 28. և 1702, նոյ. 20. նոյն միջոցին Մարկոս աբ. կը յիշուի Աո. Եգիպտոսի. կը թուի թէ՝ անոր պաշտօնը երկարած է մինչև Կոլոտի Երուսաղէմի փոխանորդութիւնը: Գրիգոր պտրք. Շղթայակիր իր Ինքնակենսագրութեան մէջ (ՄՁ. Թ. 532) կը գրէ թէ Մարկոս աբ. Պոլսեցին երկար ժամանակ առաջնորդ եղած է Եգիպտոսի: Յովհ. Կոլոտ իր վէքիլութեան ժամանակ 1713ին Պոլիս կ'ղրկէ այս Մարկոս աբեղան՝ Ժողովուրդը ուխտաւորութեան յորդորելու համար, բայց ան Ս. Ածածնի. եկեղեցիին մէջ դէմ կը խօսի Կոլոտին, ու համոզելով օրուան պատրիարք Յովհաննէս Գանձակեցին՝ անկէ կ'առանայ Երուսաղէմայ վէքիլութիւնը և իր վատ արարքովը ծանօթ Պալըքէսէրցի Հայրապետ անուն աշխարհականի մը հետ կը դառնայ Երուսաղէմ. բայց կը մերժուին, ու դարձեալ Յովհաննէս Կոլոտ վրդ. կը վերստանձնէ վէքիլութիւնը: Ս. Յակոբի ընծայած յիշատակներու մասին (ՄՁ. Թ. 532):

ՄԱՐԿՈՍ ԴԱՐԱՆԱՂՑԻ. — Լս. Ս. Յարութեան 1614էն սկըսեալ, Գրիգոր պտրք. Պարոնտէրի օրով: Համամայր եղբայր Դարանաղցի Գրիգոր վրդ.ի. իր մասին լաւագոյն վկայութիւնը կը քաղենք Յայսմաւուրքի մը յիշատակարանէն (ՄՁ. Թ. 66). «... ըստ այսմ յարայուցի ամենայնիւ գովեալ աստուածասէր և հաւատարիմ միայնակեացս Մարկոս կոչեցեալ. որ է ի գաւառէն Դարանաղեաց, որ այժմ Կամախ յորջորջի. եղբայր գ՞ո-